

Ս Ղ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու համար
Արմեն Այվազյանի՝ «Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական
շարժման քառուղիներում» ատենախոսության հրապարակային
պաշտպանության առիթով ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող 004
մասնագիտական խորհրդում
2003թ. դեկտեմբերի 9-ին կայացած նիստի

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)

Պատասխան խոսք

Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի
«Կարծիքին»

«Շնորհակալություն:

Հայոց պատմության ամբիոնի կարծիքը նկատում է, որ
«ատենախոսության հեղինակը նշանակալից աշխատանք է կատարել Հայոց
եկեղեցու պատմության մի շարք հարցերի բարձրացման և ուսումնասիրության
ուղղությամբ»: Նշվում է նաև, որ «շրջանառության մեջ են դրվել որոշ
նորահայտ նյութեր, որոնք հարստացնում են մեր գիտելիքները հայ
ազատագրական շարժման առանձին դրվագների վերաբերյալ»:

Միաժամանակ կարծիքը բացասական է: Տրվում է երկու հիմնական
պատճառ, որով մեր ատենախոսությունը, ըստ ամբիոնի, չի կարող
ներկայացվել որպես դոկտորական թեզ: Դրանք են՝ աշխատության
կառուցվածքը և վերնագրի անհամապատասխանությունը բովանդակությանը:

Սկզբում խոսենք կառուցվածքային խնդիրների մասին: **[ԲԱՆԱՎՈՐ
ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «Ծավալի մասին էլ խոսք կար, բայց նախորդ պատասխանում
այդ մասին արդեն խոսել են».]**

Ամբիոնի համաձայն՝ ատենախոսության մեջ «չկա ընդհանուր
հայեցակարգ, որի շուրջ կարելի կլիներ համախմբել ամբողջ նյութը:
Աշխատանքը չունի առանցք», -- պնդում է այս կարծիքը:

Իսկ ինչպե՞ս է իրականում: Մեր ուսումնասիրության գլխավոր առանցքը կազմում է Հայոց եկեղեցու 1720-1730-ական թթ. պատմությունը, սակայն ուսումնասիրվող հարցերի բնույթն ու բարդությունն այնպիսին են, որ հարկ է առաջանում, պատկերավոր ասած, հետազոտական արտագրոհներ **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «ռուսերենով «âûăăçêâ», հայերենում տարածված բառ չէ:]** կատարել դեպի նախորդող և հաջորդող պատմական ժամանակահատվածները: Իսկ դա թե՛ս խնդիր չէ. կարիք է առաջանում թափանցել նոր սկզբնաղբյուրների դաշտեր և անծանոթ տարածքներ:

«Հայոց պատմության ամբիոն»-ի համաձայն, մեզ հաջողվել են բազմաթիվ ու բավականին խորը արտագրոհները. կարծիքը նշում է, որ «ատենախոսության մեջ առկա են ամբողջական էջեր, ենթագլուխներ ու անգամ գլուխներ, որոնք... վերաբերում են նախընթաց դարերին, հատկապես 15-17-րդ դարերին»: Այլուր ամբիոնն ընդլայնում է մեր հետազոտությունների ժամանակագրական շրջանակը, նշելով, որ «գործ ունենք նյութերի ժողովածուի հետ, նյութեր, որ սկսվում են V դարից և հասնում XVIII դարը»: Ընդունվում են նաև մեր առաջխաղացումները դեպի XVIII դարի երկրորդ կես: Սակայն փոխանակ խրախուսելու հետազոտական տեսակետից այդ դժվարին ուղին, որով և միայն կարելի էր պատասխանել մեր առաջադրած հարցերին, ամբիոնը դիտում է այն իբրև խոշոր թերություն, մեզանից պահանջելով աշխատության բնույթին խորթ մի ինչ-որ այլ՝ «ավանդական» համարված կառուցվածք: Այսինքն՝ փորձ է արվում իբրև թերություն մատուցել մեր ատենախոսության առավելությունը, այն է՝ ժամանակագրորեն և թեմատիկ առումով աղբյուրային զանազան դաշտերում աշխատելու և կողմնորոշվելու կարողությունը:

Պահպանելով հանդերձ ԲՈՅ-ի բոլոր պահանջները՝ ատենախոսությունը կառուցել ենք քննական, կարելի է նույնիսկ ասել՝ «դետեկտիվ» եղանակի կանոններով: Այսինքն՝ առաջին իսկ գլխում առաջադրել ենք մի բարդ լուծելի հանգույց, որի գծերով հաջորդաբար կատարել ենք բազմաթիվ փոխկապակցված, զարտուղի ճանապարհներով միմյանց լրացնող և հաստատող հետաքննություններ: Այո՛, գուցե սա իրոք ավանդական կառուցվածք չէ: Բայց ինչպե՞ս կարելի է ասել, թե այսպիսի կառուցվածքն իբր

չունի «առանցք» և «ընդհանուր հայեցակարգ»: Ինչպե՞ս կարելի է ասել, թե ատենախոսության գլուխները, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին մի բարդ խճճված հանգույցի բացահայտում է, ընդամենը՝ «նյութերի ժողովածու» է:

Գիտխորհրդի անդամ, ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը տեղից բացականչում է՝ «Առհասարակ, ի՞նչ է նշանակում ավանդական կառուցվածք»:

Վ. Բարխուդարյան. «Առանց այն էլ երկարում է: Հարցեր մի տվեք, թույլ տվեք պատասխանի: (Դիմելով Ա. Այվազյանին) Դուք շարունակեք: Տեղից հարցերին մի պատասխանեք»¹:

Ա. Այվազյան. «Չեմ կարծում, թե երկարում է: Ասվածին պետք է պատասխանել»: **Շարունակում է պատասխանի ընթերցումը:**

Պատկերացում ստեղծելու համար մեր քննած խնդիրների մասին, բերենք ընդամենը մի օրինակ: 1726 թ. Կ. Պոլսում կատարված կաթողիկոսական ընտրությունների շուրջն առաջացած մթնոլորտն անհնար կլիներ հասկանալ, եթե չուսումնասիրեինք հետևյալ հարցերը **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «Հիմա ես կարդամ այն հարցերը, որոնք մեզ օգնում են հասկանալու, թե ինչու 1726 թ. այսպես եղավ, ինչու՞ այնպես վերաբերվեցին և այլն»]**.

- 1) պե՞տք էր ուսումնասիրել 1720-ական թթ. Այսրկովկասում և Իրանում ստեղծված բարդ ռազմաքաղաքական իրադրությունը և արևելահայոց ազատամարտերը.
- 2) պե՞տք էր ուսումնասիրել Ս. Էջմիածնի ներգրավվածությունը ազատագրական շարժման նախապատրաստական աշխատանքներին.
- 3) պե՞տք էր ուսումնասիրել նախորդ 70 տարվա ընթացքում տեղի ունեցած կաթողիկոսական ընտրությունները և նույնիսկ ավելի վաղ՝ 1441 թ. դրանց անցկացման կարգը.

¹ Հետագայում, սակայն, Վ. Բարխուդարյանը ոչ միայն երբեք չի լռեցնում Այվազյանի դեմ տրամադրվածների ընդհատումները, այլև ինքն է հաճախ ընդհատում ատենախոսին: Վ. Միքայելյանն ատենախոսի բացահայտ կողմնակիցներից էր: Եվս մի անգամ նա ընդհատում է դարձյալ ատենախոսի կողմնակցին միայն՝ ակադ. Մ. Զուլալյանին:

- 4) պե՛տք էր ուսումնասիրել այդ ընթացքում արևելահայ և արևմտահայ կղերի հարաբերությունները.
- 5) պե՛տք էր ուսումնասիրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կ. Պոլսի փոխհարաբերությունները.
- 6) պե՛տք էր ուսումնասիրել Հայադավան-կաթոլիկադավան հարաբերությունները.
- 7) պե՛տք էր ուսումնասիրել կանոնադրական պայմանավորվածությունները Սսի և Էջմիածնի կաթողիկոսությունների միջև.
- 8) պե՛տք էր ուսումնասիրել Կարապետ Ուլենցու կենսագրական մանրամասնությունները **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «Նա այդ ժամանակ արդեն տարիքով մարդ էր, պե՛տք էր գնալ մինչև նրա մանկությունը, որպեսզի հասկանանք, թե նրան ինչու՞ էին 1720-ական թթ. այդպես վերաբերվում. որովհետև նա ծնվել էր Զեյթունում և այլն]**, ինչպես և շատ ու շատ այլ կարևոր հարցեր:

Եթե փորձենք այս շղթայից հանել գեթ մեկ օղակ՝ մեր սկզբում առաջադրած հարցի պատասխանը կդառնա թերի և նույնիսկ անհնար, միաժամանակ խախտելով թե՛ շղթայի ամբողջականությունը, թե՛ մյուս բոլոր օղակներինը՝ առանձին-առանձին: Այսպիսով Ամբիոնի արտահայտած կարծիքը, թե ատենախոսության վերնագրում XVIII դարի նշված լինելը մեխանիկորեն արգելում է նրա շրջանակներից դուրս գալը՝ չի կարող լուրջ դիտվել և մերժելի է:

Ձարմանալի է, որ միայն «Հայոց պատմության ամբիոն»-ում չեն ցանկացել նկատել ատենախոսության ամուր փոխկապակցվածությունը և այն անվանել են ինչ-որ խառը «նյութերի ժողովածու»:

Կարդանք ատենախոսության կառուցվածքի մասին այլ տեսակետներ: Նախ, կանխելով պրոֆ. Դիլոյանի ելույթը, մի մեջբերում անենք նրա ընդդիմախոսությունից.

Վ. Քարխուղարյանն ընդհատում է. «Ընդդիմախոսը դեռ չի կարդացել, ի՞նչ իրավունք ունեք»:

Ա. Այվազյան. «Թույլ տվեք ես կարդամ այս հատվածը, որովհետև այն վերաբերում է հենց այս հարցին՝ առանցքի հարցին և հայեցակարգի հարցին: Կարող է ընդհանուրը կարդալու մեջ այդ կետը կորի-չնկատվի: Թույլ տվեք, այդ երեք նախադասությունը [իմա՝ երեք կարծիքներից] պիտի կարդացվի: Հետո պարոն Դիլոյանը կարող է այն չկարդալ: Ես կարծում եմ այստեղ ավելի կարևոր է կարդալ դա, քան այնտեղ»:

Ա. Այվազյանը շարունակում է պատասխանի ընթերցումը:

«ատենախոսությունն ընդգրկում է հայ եկեղեցու 17-18-րդ դարերի պատմությանն առնչվող խիստ կարևոր դրվագների մի ամբողջ համալիր, դրվագներ, որոնք ատենախոսը կարողացել է մեծ հմտությամբ շաղկապել միմյանց և հանգել բավական հիմնավոր և ինքնօրինակ եզրակացությունների»:

բ. Մեջբերում եմ նաև ակադեմիկոս Զուլալյանի ընդդիմախոսությունից. ուսումնասիրությունը պահանջել է «ոչ սովորական, այլ հետախուզական-քննչական տիպի պատմագիտական աշխատանք»:

գ. Եվս մի մեջբերում Մաշտոցի անվան Մատենադարանի եզրակացությունից. «XVII-XVIII դարերում տեղի ունեցած մի շարք կարևոր իրադարձությունների վերլուծությունը զանազան թելերով շաղկապվում ու հանգուցվում է աշխատության հիմնական առանցքում՝ XVIII դարի առաջին քառասնամյակում ու հատկապես 1720-1730-ական թթ. հայոց եկեղեցու՝ ազատագրական շարժումների հետ փոխառնչություններում և փոխազդեցություններում»:

Այսպիսով՝ մեր ատենախոսությունն ունի հստակ առանցք էլ, կուռ կառուցվածք էլ:

Այժմ վերնագրի և ատենախոսության համապատասխանության հարցի մասին:

Հայոց պատմության ամբիոնում սխալ են հասկացել ատենախոսության վերնագիրը, այն էլ երկակիորեն սխալ:

1. Չգիտես ինչու ակնկալել են մեր ատենախոսության մեջ գտնել 1701-ից մինչև 1801 թ.՝ տարեց տարի գլորվող հայտնի դեպքերի մի երկարաշունչ պատմություն, ինչպիսին է հավանորեն իսկական «գիտական տրակտատ»-ը՝ ոմանց պատկերացմամբ: Սակայն գիտության գլխավոր գործառույթը (ֆունկցիան) նորություն հայտնաբերելն է, այլ ո՛չ թե հանրածանոթ փաստերը վերաշարադրելը:
2. Ամբիոնում կարծել են նաև, որ «ատենախոսությունում քննարկվող հիմնահարցը, ինչպես ակներև է խորագրից, վերաբերելու է հայ ազատագրական շարժմանը»:

Սակայն այդպիսի ակնկալիքներ, այն էլ ակներև ակնկալիքներ, մեր խորագիրը բոլորովին էլ չի տալիս: Այդ մասին նախորդ ելույթում արդեն խոսել ենք, ուստի այժմ լրացուցիչ նկատենք, որ ատենախոսության հիմնահարցը վերաբերում է, նախ՝ հայոց եկեղեցու պատմությանը, այնուհետև՝ հայոց եկեղեցու ազատագրական շարժման հետ ունեցած անհայտ կապերին:

Ամբիոնը նաև վրդովվում է, որ «ազատագրական շարժում որպես այդպիսին ատենախոսությունում չկա»: Լավ, ընդունենք այդպես է: Բայց, եթե չկա, ապա ինչու՞ քիչ անց առաջարկվում է մեր կատարած աշխատանքը խորագրել ոչ այլ կերպ, քան «Ակնարկներ Հայոց եկեղեցու և հայ ազատագրական շարժման XVII-XVIII դարի (sic) առաջին քառասնամյակի պատմության»: Բացի կարծիքում տեղ գտած նշված հակասությունից, այստեղ ինչ-որ վրիպակ էլ կա և մենք այդպես էլ չհասկացանք, թե կոնկրետ ո՞ր ժամանակահատվածն է մատնանշվում՝ ինչ ասել է՝ «XVII-XVIII դարի (sic) առաջին քառասնամյակի պատմություն»:

Այսպիսով ամբիոնի կարծիքը վերջնականապես խճճվում է: Դրա արդյունքներից է նաև այն, որ ամբիոնում անհասկանալի հիմքի վրա որոշել են, որ «Ակնարկներ» վերնագրով դոկտորական ատենախոսություն լինել չի կարող:

Վ. Բարխուդարյանն ընդհատում է և հարցնում. «Ի՞նչ չի կարող լինել»:

Ա. Այվազյանը կրկնում է. «Ակնարկներ» վերնագրով դոկտորական ատենախոսություն լինել չի կարող»:

Մասնագիտական խորհրդի անդամ, ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը տեղից միջամտում է. «Էդ ո՞ր որոշումով»:

Մասնագիտական խորհրդի անդամ, ԵՊՀ «Հայոց պատմության ամբիոնի» աշխատակից պատ. գիտ. դոկ. *Հայրապետ Մարգարյանը* դաիլիճից ընդհատում է և հարցնում. «Էդ որտե՞ղ է ասված»:

Ա. Այվազյանը դիմում է Վ. Բարխուդարյանին և Կ. Խաչատրյանին, ասելով. «Տվե՛ք [ամբիոնի] կարծիքը, ես կկարդամ: Կարելի՞ է: Կկարդամ, հետո կշարունակեմ»:

Կ. Խաչատրյանը բավական ձգձգելուց հետո (իբր փորձելով ինքը գտնել և կարդալ այդ հատվածը), ի վերջո փոխանցում է կարծիքը *Այվազյանին*² վերջինիս կրկնակի պնդումից հետո:

Ա. Այվազյանը կարդում է ամբիոնի կարծիքի համապատասխան հետևյալ հատվածը. «Ուստի, ամբիոնի կարծիքով աշխատանքը պետք է խորագրվեր հետևյալ կերպ՝ «Ակնարկներ Հայոց եկեղեցու և ազատագրական շարժման XVII-XVIII դարի առաջին քառասնամյակի (sic) պատմության»: Կլինեն առարկողներ, որ դա դոկտորական ատենախոսության խորագիր չի կարող լինել: Այո՛, չի կարող լինել, բայց չէ որ աշխատանքը հենց այդպիսին է, այդ շրջանակում՝ թե ժամանակաշրջանի և թե նյութի տեսակետից»:

«Ահա այստեղ է գրված», - շեշտում է *Ա. Այվազյանը* և վերադարձնում կարծիքը Վ. Բարխուդարյանին:

Հ. Մարգարյանը տեղից նորից միջամտում է. «Բայց կար [ասված էր նաև], որ Աշոտ Յովհաննիսյանի գիրքը հենց «Դրվագներ» է կոչվում»:

Ա. Այվազյանը պատասխանում է. «Դա նշված էր «Միջին դարերի պատմության» բաժնի, այլ ո՛չ թե ամբիոնի կարծիքում: Ես չգիտեմ, դուք գուցե մասնակցել եք այդ, և ոչ թե այս կարծիքը գրելուն: Այդքանին տեղյակ չեմ»²: *Ա. Այվազյանը* շարունակում է ընթերցել իր պատասխանը:

² Բանն այն է, որ Հ. Մարգարյանը ԵՊՀ «Հայոց պատմության ամբիոնի» աշխատակից է, ոչ թե Պատմության ինստիտուտի:

«Սակայն այս հարցում մենք համամիտ ենք Պատմության ինստիտուտի Միջին դարերի բաժնի քիչ առաջ ընթերցված տեսակետին, որը, հիշեցնելով ակադ. Աշ. Հովհաննիսյանի արժեքավոր երկհատորյակը, արդարացիորեն նկատում է, որ «Դրվագներ» բառը (նույնն է, ինչ «Ակնարկներ») ամենևին չի կարող նսենացնել պատմագիտական աշխատությունը:

Հավելվածների և ծավալի մասին արդեն խոսել ենք, ուստի ընդամենը մեկ անգամ էլ ընդգծենք, որ հավելված էլ կա, հավելված էլ: Մեր հավելվածների մի մեծ բեկոր նույնպիսի ուսումնասիրություններ են, ինչպիսիք կատարված են ատենախոսության հիմնական մասում: Մեր հավելվածներն սերտորեն վերաբերում են քննարկվող թեմային՝ դրանք բոլորը պարզորեն օժանդակում են XVIII դարում մեր առաջադրած խնդիրների լուծմանը:

Ամբիոնը մնում է այն հին տեսակետին, որ Ղազար Ջահկեցին եղել է XVIII դարում գահակալած «ամենաանարժան և սկանդալային» կաթողիկոսը: Մեր տեսակետը ճիշտ հակառակն է՝ Ղազար Ջահկեցին եղել է XVIII դարում գահակալած ամենաանարժանավոր կաթողիկոսներից մեկը: Մենք այս մասին կխոսենք հաջորդ պատասխաններից մեկի ժամանակ, սակայն թույլ տվեք զարմանք հայտնել, որ ամբիոնը որպես թերություն է նշում այն, որ մենք առավելագույն ուշադրություն ենք դարձրել Ղազար Ջահկեցու գործունեության վաղ շրջանին, որը մինչ այդ որևէ մեկը չէր ուսումնասիրել: Սա ևս մեկ անգամ բերում է մեզ այն համոզման, որ ամբիոնն ուզում է մենք զբաղվենք հայտնի փաստերի ամփոփմամբ, իսկ մենք ուզում ենք զբաղվել պատմական անհայտ դաշտերի հետազոտմամբ, ինչը և կազմում է գիտության ամբողջ իմաստը:

Ամբիոնի կարծիքում կա մեզ համար հատկապես անընդունելի մի կետ: Ակնարկվում է, թե ուսումնասիրելով Ղազար Ջահկեցու «Ողբ»-ի և «Աղոթք»-ի մոտիվները, որոնք անվանված են «սովորական ասված խոսքեր, որ հատուկ է (sic) հայ մտքին՝ սկսած XIV-XV դարերից», մենք դիտավորյալ չենք հղել Պողոս Խաչատրյանի, ինչպես ասված է, «համապատասխան մեմագրությունը»: Այս կապակցությամբ ունենք մի քանի դիտողություն.

- 1) Նախ և առաջ պարտադիր էր տալ վաստակաշատ գիտնականի մեմագրության ամբողջական անվանումը՝ «Հայ միջնադարյան

պատմական ողբեր (ԺԴ-ԺԵ դարեր)» (Երևան, 1969): Գուցե՞
ամբիոնում ժամանակ չեն ունեցել ճշտելու այդ տվյալները:

Վ. Քարխուղարյանն ընդհատում է ատենախոսին և նկատողություն ամուսն. «Պարոն Այվազյան, դուք ոչ այնքան պետք է ամբիոնին դիտողություն անեք, այլ դուք պետք է նրա դիտողություններին պատասխանեք»:

Դահլիճից լսվում են ներկաների բազմաթիվ վրդովված բացականչությունները՝ «Պատասխանում է, էլի», «Բա չի պատասխանում», «ավելի լավ պատասխան հնարավոր էլ չի» և այլն: Մասնագիտական խորհրդի անդամ **Վարդգես Միքայելյանը** նույն հարցով կարճ վիճաբանության մեջ է մտնում **Վ. Քարխուղարյանի** հետ:

Ա. Այվազյանը դիմում է **Վ. Քարխուղարյանին** և դահլիճին. «Լավ, կարելի՞ է [և ինձ արտահայտվել]: Սա գիտական վեճ է, և եթե ինձ կարելի է դիտողություն անել, ուրեմն, կներե՞ք, ես էլ իրավունք ունեմ դիտողություն անելու»:

Դահլիճից լսվում է մասնագիտական խորհրդի անդամ, պատ. գիտ. դոկտոր **Էդվարդ Դանիելյանի** բացականչությունը՝ «Մի՛ դատիր, որ չդատվես»: Լսվում է ներկաներից շատերի ծիծաղը:

- 2) Իր գրքում Պողոս Խաչատրյանը վերլուծում է պատմական ողբերը որպես հայկական միջնադարյան պոեզիայի յուրօրինակ ժանր՝ վերհանելով հատկապես դրանց գեղագիտական և փիլիսոփայական արժեքը: Այս կարգի ուսումնասիրությունն աղետներ չունի մեր խնդրի հետ, քանի որ մենք վերլուծում ենք ո՛չ թե ողբը որպես գրական ժանր, այլ Ղազար Ջահկեցու բոլոր ժանրերով գրած ստեղծագործությունները՝ նրանց գաղափարաբանական հարցերը վերհանելու նպատակով: Ըստ այդմ էլ՝ նրա ստեղծագործությունների ազատագրական մոտիվները մեզ համար «սովորական ասված խոսքեր» չեն:

- 3) Իսկ ամենակարևորն այն է, որ Պողոս Խաչատրյանի նշված մենագրության մեջ որևէ հատված Ղազար Ջահկեցու երկերից գոյություն չունի: Այսպիսով՝ այդ շատ արժեքավոր մենագրության հղումը մեր ուսումնասիրության մեջ կլիներ անիմաստ ինքնանպատակ:

Երեք էջի սահմաններում շարադրված այս կարծիքում կան նաև լեզվաոճական լուրջ անհարթություններ և վրիպակներ, օրինակ՝ «ծայրագույն նվիրակներն» անվանված են «ծայրագույն նվիրյալներ» (էջ 3), «քվեարկեցին»-ի փոխարեն գրված է «քննարկեցին» և այլն (էջ 4):

Ամփոփենք: Պատասխանատու առիթով պահանջված «Հայոց պատմության ամբիոնի» այս կարծիքը գրված է բավական անփույթ և շտապողականության անթաքույց մթնոլորտում: Կարծիքում տեղ գտած նկատառումներն ու եզրակացությունները խախտո են, մակերեսային և անընդունելի:

Շնորհակալություն ուշադրության համար»:

(Դահլիճում ծափահարում են:)

Վ. Բարխուդարյանը ատենախոսին ցույց է տալիս ինչ-որ փաստաթուղթ և մտնում նրա հետ բանավեճի մեջ: **Վ. Խաչատրյանը** դիմում է դահլիճին. «Ես մի անգամ զգուշացրեցի, որ ծափահարություններ չլինեն: Էստեղ նախընտրական միտինգ չի, է՞, որ դուք ձեր թեկնածուին եկել եք պաշտպանելու: Ըսենց չի կարելի, է՛: ԲՈՅ-ի նախագահի տեղակալն էլ ասեց, որ չի կարելի»:

Վ. Բարխուդարյանը դիմում է մասնագիտական խորհրդին. «Ուրեմն, այսպես է: Քիչ առաջ ստացվել է պատ. գիտ. դոկտոր Էմմա Կոստանոյանի կարծիքը, բայց ատենախոսը ծանոթ չէ: Բերե՛ք, այսպես անենք, լսենք ընդդիմախոսների կարծիքները, մինչև եղ ատենախոսը կծանոթանա և վերջում կպատասխանի»:

Ա. Այվազյանը բարձրացնում և ցույց է տալիս ձեռագրով գրված այդ կարծիքը և դիմում մասնագիտական խորհրդին. «Ձեռագրով գրված այս

կարծիքին ես «մինչև էդ» չեմ ծանոթանալու»: Վերադարձնում է կարծիքը Վ. Բարխուդարյանին:

Ակադեմիկոս *Վարդգես Միքայելյանը* դիմում է Վ. Բարխուդարյանին. «Ներողություն, Կոստանդյանի կարծիքը ինչի՞ մասին է»: Լսվում է դահլիճի ծիծաղը: *Վարդգես Միքայելյանը* մտնում է Վ. Բարխուդարյանի հետ վիճաբանության մեջ:

Վ. Բարխուդարյան. «Հիմա ի՞նչ են առաջարկում գիտխորհրդի անդամները»:

Դահլիճից լսվում են բացականչություններ. «Ժամկետը խախտված է, «ուշացված է» և այլն:

Մասնագիտական խորհրդի անդամներից մեկը հարցնում է՝ «Իսկ ԲՈՅ-ի կանոնադրությամբ ի՞նչ է նախատեսված»:

Վ. Բարխուդարյան. «Այսպես է՝ ԲՈՅ-ի կանոնադրությամբ պետք է հրապարակել և կցել գործին: Եթե չհրապարակեցինք, հավանաբար, չպետք է և կցել գործին, չէ՞»:

Լսվում են բացականչություններ. «ԲՈՅ-ի կանոնադրությամբ 10 օր առաջ պետք է կարծիքները ստացվեն»:

Վ. Խաչատրյանն բացականչում է. «Կոստանդյանն այսօր պետք է գար, հիվանդ է, չի եկել, խնդրել է, որ հրապարակենք»³:

Դահլիճում ներկա ԲՈՅ-ի նախագահի տեղակալ, բան. գիտ. դոկտոր *Լիլիթ Արզումանյանը* ոտքի է կանգնում և դիմում ներկաներին. «Նախ, ես ուզում եմ ասել, որ դահլիճի այսօրինակ մասնակցությունը պաշտպանությանը օրինական չէ: Դուք վնասում եք: Դա մեկ»:

Մասնագիտական խորհրդի անդամ, պատ. գիտ. թեկնածու *Պետրոս Չովհաննիսյանը* տեղից բացականչում է՝ «Արդեն վնասեցին»:

Լիլիթ Արզումանյանը շարունակում է. «Երկրորդ՝ ատենախոսին կարծիքները, պարոն Բարխուդարյան, պետք է ներկայացվեն [պաշտպանությունից] տաս օր շուտ: Այն կարծիքը, որին տեղյակ չէ ատենախոսը, հրապարակման ենթակա չէ: Գործին կարող եք կցել»:

³ Փաստորեն, Վ. Խաչատրյանը խոստովանում է, որ իրենք նախապես տեղյակ են եղել էմմա Կոստանդյանի գրած կարծիքին, բայց այնուամենայնիվ ատենախոսին այդ մասին չեն հայտնել:

Վ. Բարխուդարյան. «Հարցը սպառվեց: Ձայնը տրվում է պաշտոնական ընդդիմախոս, ակադեմիկոս Մ. Զուլալյանին»:

Այդ ընթացքում *Կ. Խաչատրյանը* դիմում է *Ա. Այվազյանին* առաջարկելով դիմել դահլիճին այլևս չծափահարելու կոչով: *Ա. Այվազյանը* ընդառաջում է և դիմում ներկաներին. «Ես ձեզ խնդրում եմ՝ ոչ մի ծափահարություններ»: Հայոց պատմության ամբիոնի աշխատակից, Մասնագիտական խորհրդի անդամ, պ. գ. թ. *Պետրոս Հովհաննիսյանը* հանդիմանանքով դիմում է Ա. Այվազյանին: Վերջինս նկատում է, որ ինքը չի կազմակերպել ծափահարությունները և դահլիճի կեսին չի ճանաչում: Պետրոս Հովհաննիսյանն դարձյալ հանդիմանում է. «Չես պատկերացնում, թե ինչքան տհաճ է»: Ա. Այվազյանը հարցնում է՝ «Ի՞նչը, որ ծափահարու՞մ եմ»:

Պետրոս Հովհաննիսյան «Այո՛»:

Ա. Այվազյանը նկատում է, որ առհասարակ ինքը չի վարում նիստը:

Վ. Բարխուդարյան. «Ոչինչ, ոչինչ, ոչ մի բան չի եղել: Ձայնը տրվում է ակադեմիկոս Մ. Զուլալյանին»: